ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2024 թվականի № 145-Ա

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Լուսինե Բաղդասարյանի*՝ 2024 թվականի մարտի 25-ի № 21 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան № 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Լուսինե Բաղդասարյանին*** տրամադրել 2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից՝ չորս աշխատանքային օր՝ 2024 թվականի ապրիլի 2-ից 5-ը ներառյալ:

2. ***Լուսինե Բաղդասարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի Սամվել Անտոնյանի անվան № 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ ***Ֆլորա Մարգարյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի մարտի 26
ք. Հրազդան